community

The New Apostolic Church around the world

01/2020/AM

2020-ի նշանաբանը՝

Քրիստոսն ազատում է

Խմբագրական՝
Քրիստոսն ազատում է

Ժամերգություն՝
Աստված տալիս է
փրկություն

Ուսմունք՝
Տես, ես գալու եմ շուտով:

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Քրիստոսն ազատում է

Ժամերգություն

4 Աստված տալիս է փրկություն:

Շրջանային բաժին

10 Տարածաշրջանային բաժին

Մանկական անկյուն

12 Խաղողի այգու աշխատողների մասին

14 Այց Վալենտինին՝ Փարիզում / Ֆրանսիա/

Տեսություն

16 Տես, ես գալու եմ շուտով:

Կազմի առջևի լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի
Կազմի ետևի լուսանկարը՝ Յենս Լանգեի

Քրիստոսն ազատում է

Լուսանկարը՝ Միջազգային ՆՄԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

ձեր ետևում է մնացել, հուսով եմ, մի լավ տարի: Ես ցանկանում եմ, որ դուք միշտ բավարար հիմքեր գտնեք շնորհակալություն հայտնելու մեր Տիրոջը բոլոր բարեգործությունների համար:

Արդեն սկսվել է նոր տարին: Ավանդույթ է դարձել, որ ես շրջանային առաքյալների համաձայնությամբ հրապարակեմ տարվա ավետիսը: 2020-ի մեր նշանաբանն այսպես է հնչում՝ Քրիստոսն ազատում է:

Սրա վերաբերյալ աստվածաշնչյան տեքստը մենք գտնում ենք Պողոս առաքյալի գաղատացիներին ուղղված թղթում՝ ,, Ազատության համար է մեզ Քրիստոսը ազատել: Ուրեմն, պինդ կացեք և վերստին ծառայության լծի տակ մի մտեք,, / Գաղատացիներին 5,1/:

Ազատությունը բարձր, արժեքավոր բարիք է: Այս կապակցությամբ մենք՝ որպես Աստծո զավակներ, նկատի չունենք միայն մեր երկրային գոյությունը: Մենք առաջին տեղում ենք դնում Քրիստոսով ազատությունը՝

- Աստված լիովին ազատ է: Նրա սերը մեր հանդեպ առանց պայմանների է:
- Մենք կարող ենք ընտրել ազատությունը: Մենք լիովին ազատ ենք անսալու Աստծո սիրուն:
- Քրիստոսը մեզ ազատում է – մեղքից, չարից, բոլոր ճնշումներից:.

2020-ի համար ես առաջարկում եմ, որ մենք կողմնորոշվենք այս հոգևոր դինամիկայի վրա՝ Քրիստոսը մեզ ազատում է:!

Մի բան ինձ համար շատ կարևոր է՝ Քրիստոսով ազատությունը Աստծո նվերն է: Եկեք մեզ Տիրոջով ազատենք նրանով, որ մենք ենթարկվենք Սուրբ Հոգու ներգործությանը:

Քանի որ մենք գիտենք, որ ամենազոր Աստված մեզ սիրում է, վստահորեն հայացքն ուղղենք դեպի ապագան: Եվ նրանով, որ մենք հավատարիմ ենք մնում Քրիստոսին, ձևավորում ենք մեր ապագան:

Բոլոր առաքյալների հետ միասին ես սրտանց ողջունում եմ բոլորիդ և ցանկանում եմ օրհնված և բարի նոր տարի:

Ժան-Լյուք Շնայդեր

Շուրջ 360 մասնակիցներ գլխավոր առաքյալի հետ տոնեցին ժամերգություն Բրամպթոնի / Կանադա/ համայնքում:

Լուսանկարը՝ ՆԱԵ Կանադա

Աստված տալիս է փրկություն

Աստվածաշնչյան խոսք՝ Սաղմոս 135,6

Տերն ինչ որ ցանկացավ, կատարեց երկնքում և երկրի վրա, ծովում և բոլոր անդունդներում:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր այստեղ և մեզ միացված համայնքներում, մենք այս առավոտ հավաքվել ենք, որպեսզի լսենք Աստծոք խոսքը: Աստված ուզում է դառնալ դեպի մեզ: Նա դառնում է ոչ թե հավատացյալների մի խմբի կամ իր ժողովրդին, նա դառնում է յուրաքանչյուրին անհատապես՝ իր անձնական հարաբերություններում: Նա ուզում է մեզ՝ յուրաքանչյուրիս, հետ խոսել որպես իր զավակի: Նա դառնում է նրանց, ովքեր քնած են իրենց հավատքային կյանքում: Այսպիսին է իրողությունը: Հավանաբար որոշ երիտասարդներ կամ նաև մեծահասակներ ունենենում են այն տպավորությունը, որ միշտ նույնն է մնում, որ ոչ մի նոր բան տեղի չի ունենում,միշտ նույն պատմությունը, նույն երաժշտությունը, նույն մարդիկ: Ամեն ինչ միատոն է, ոչինչ տեղի չի

ունենում, ոչինչ չի փոխվում, իսկ այսպես դանդաղ քնի մեջ կընկնեն :

Հիշեք Պողոսի պատմությունը Տրոյայում: Պողոսն այնտեղ մինչև կեսգիշեր երկար քարոզում էր, և մի երիտասարդ մարդ, ով նստած էր վերևում՝ պատուհանի մոտ, քնեց, քանի որ Պողոսի քարոզը երկար էր : Գրքում այսպես է գրված. ,, Իսկ Եվտիքես անունով մի երիտասարդ նստել էր պատուհանին ու խոր քնի մեջ էր ընկել: Երբ Պողոսը խոսելը երկարաձգեց, նա խոր քնից թուլացած, երրորդ հարկից ցած ընկավ, ու վերցրին նրան մեռած,, /Գործք 20,9,10/:

Սիրելի եղբայրներ և քույրեր, հավանաբար որևէ մեկը ասում է՝ այլևս ոչինչ չկա, իմ հավատը մահացած է: Կամ գուցե նա դա ամուր է պահում սովորության համաձայն:

Այսօր նա պետք է զգա՝ ,, Աստծուց տրված կյանքը դեռ կա: Հոգին դեռ ապրում է, նա կարիք ունի և ձգտում է Տիրոջ հետ միասնության, նա ուզում է լսել Աստծո խոսքը, նա ուզում է ճաշակել Սուրբ Հաղորդությունը, նա ցանկանում է լինել Հիսուսի մոտ,,:

Գեղեցիկ երևույթ է, երբ մեկը, ով քնած է հավատի մեջ, հանկարծ հասկանում է, որ դեռ ինչ որ բան ապրում է իր մեջ՝ ,, Դա աստվածային կյանքն է, իսկ հոգին ուզում է, որ ես այդ կյանքին սնունդ տա, որի կարիքը նա ունի,,: Հրաշալի կլինի, եթե դա այսօր տեղի ունենա: Դուք հավաբնաբար զարմանում եք, երբ լսում եք այս խոսքը՝ ,, Այն ամենը, ինչ ուզում է Տերը, անում է…,,: Եթե դա կարդում են, կարող են հանգել արտասովոր մտքերի: Դա իսկապես Աստծո զորության նկարագրությունն է: Աստված ամենազոր է, նրա համար չկան սահմաններ: Նա ամեն ինչ կարող է, ոչ մի բան նրա համար անհնար չէ: Նա կարող է անել այն, ինչ ուզում է, և նա անում է այն, ինչ ուզում է: Դա նաև նշանակում է, որ նա անկախ է: Ոչ ոք նրան չի կարող ասել, թե նա ինչ պետք է անի,ոչ ոք չի կարող նրան ստիպել՝ ոչ մի մարդ, ոչ մի ոգի, ոչ մի իրավիճակ: Նրա վրա նաև ոչինչ չի կարող ազդել: Ճիշտ չէ, երբ ասում են՝ եթե ես անեմ այս կամ այն բանը, ապա Աստված համապատասխան էլ կգործի: Ոչ: Նա անում է հենց այն, ինչ ուզում է: Ոչ ոք չի կարող նրան ստիպել որոշակի ձևով գործելու, անգամ, եթե նա սուրբ լինի: Տերն ինչ ուզում է, դա էլ անում է: Դա նշանակում է նաև, որ մենք իսկապես չենք կարող նրան հասկանալ, քանի որ նրա կամքն ու մտքերը վեր են մեր հասկացողությունից: Մենք չենք կարող ասել, որ մենք չենք ըմբռնում Աստծո կամքը: Մենք չենք կարող նրան հասկանալ և չենք կարող նրա հետ համաձայն լինել,Աստված անում է այն, ինչ ուզում է: Նա ուզում է, որ մենք ըմբռնենք նրա կամքը: Այստեղ ոչ մի բանավեճ չկա: Նա կարող է ամեն ինչ անել: Նա անում է այն, ինչ ուզում է: Ոչ ոք չի կարող նրան ինչ որ բանում ստիպել: Սակայն, դա չի նշանակում, որ նա գործում է կամայականորեն, առանց կանոնների, պատահականորեն:Ոչ: Աստված հավատարիմ է: Սա մի առանձնահատուկ դրույթ է: Մենք կարող ենք ապավինել նրան: Նա է ճշմարտությունը: Նա է արդարը, նա է սերը: Նա ասում է, թե ինչ է անում և անում է այն, ինչ ասում է:

Իսկ ահա հետաքրքիր հարցը՝ ո՞րն է Տիրոջ կամքը: Ի՞նչ է ուզում նա անել: Դա շատ պարզ է: Սկզբից ի վեր Աստված ուզում էր, որ մարդը, ում նա ստեղծել է, իր հետ միասնություն ունենա: Այսպես կարող ենք ամփոփել Աստծո կամքը՝ Աստված ցանկանում է, որ մարդը հավիտենական միասնության մեջ լինի իր հետ: Դրա համար է նա մարդուն ստեղծել, և դա էր ու դա է նրա կամքը: Շատ հեշտ է դա հասկանալ: Մեղքի մեջ ընկնելը չփոխեց Աստծո կամքը: Աստծո կամքը մնաց նույնը, մարդու պահվածքը ոչինչ չփոխեց: Նա ուզում է, որ մենք իր հետ միասնության մեջ լինենք: Դա է նրա կամքը, և նա անում է այն, ինչը ուզում է: Լավ է իմանալ, որ ամեն ինչ, ինչ Աստված ասում է և ինչ որ ժամանակ արել է, ծառայում է այդ միակ նպատակին: Նա ուզում է, որ բոլոր մարդիկ հասնեն փրկության, որ բոլորը միասնություն ունենան իր հետ:

> Աստված ցանկանում է, որ մարդը իր հետ հավիտենական միասնության մեջ լինի:

Նրա անկախ կամքն է, որ կա փրկության միակ ճանապարհ, որ կա իր հետ միասնության մեկ ճանապարհ, իսկ դա՝ հավատն է Հիսուս Քրիստոսի հանդեպ: Հիսուսն ինքն է անձնամբ ասում. ,, Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով,, /Հովհաննես 14,6/: Եվ ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետև երկնքի տակ չկա մարդկանց տրված այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկվենք / Գործք 4,12/: Դա է Աստծո կամքը, և մարդու ոչինչ չի մնում, քան նրան ընդունելը: Դրա շուրջ չեն կարող բանավիճել՝ ,, Մի քիչ անարդար է, կան այնքան բարի մարդիկ, ովքեր չեն հավատում Քրիստոսին,,: Այստեղ խոսքը բարոյական չափանիշների մասին չէ: Այստեղ խոսքը Աստծո հետ միասնության մասին է: Անկախ նրանից, թե դա մարդուն դուր է գալիս, թե՝ ոչ, կա միայն մեկ ճանապարհ՝ Հիսուս Քրիստոսը: Դա է

միակ ճանապարհը, այլ ճանապարհ չկա: Մարդ պետք է հավատա Հիսուս Քրիստոսին: Ես գիտեմ, որ այսօր դա շատերի կողմից այլ ձևով է ընկալվում, և շատերն այն կարծքին են, որ դեպի Աստված տանող ավելի շատ ճանապարհներ կան, ոչ թե՝ մեկ: Սա բոլորովին ճիշտ չէ: Աստված կարիք չունի, որ մենք հասկանանք նրան: Նա միայն ասում է՝ Ես անում եմ այն, ինչ ուզում եմ, և դու պետք է դա ընդունես: Թող բանավիճելը: Դա բանավիճելու առարկա չէ: Այնպես է, ինչպես որ կա: Կա միայն մեկ ճանապարհ՝ Հիսուս Քրիստոսը, նրան պետք է հավատալ:

Աստծո կանչը առանձնահատուկ կանչ է, դեպի Հիսուսը գնալը և նրան հետևելը ևս նրա կամքի արտահայտության ձևերից մեկն է: Աստված կանչում է, երբ և ում ուզում է: Մեկ անգամ ևս՝ մենք չենք կարող դա հասկանալ: Դրա համար ոչ մի բացատրություն չկա: Նա որոշել է, որ փրկության իր պլանը աստիճանաբար ընթանալու է առաջ: Մենք սպասում ենք Քրիստոսի գալստյանը: Մենք դրան սպասում ենք որպես նրա հասարնացուական համայնքի մի մասնիկ, որ իրավունք է վաստակել մասնակցել երկնքի հարսանիքին և որպես առաջնեկ գնալու Աստծո արքայություն: Մեկ այլ աստիճանը դա մեծ Տխրությունն է լինելու: Նաև կանչվելու են մեծ Տխրության հոգիները, որպեսզի գնան Աստծո արքայություն: Մյուսները կանչվելու են խաղաղության թագավորությունում: Մենք չենք կարող հասկանալ, թե ինչու է Աստված մեկին այսօր կանչում, իսկ մյուսին՝ ավելի ուշ: Մի հարցնի, թե Աստված ինչու է այդպես ուզում: Մենք դա չենք կարող հասկանալ: Մենք դա հեզորեն ընդունում ենք: Աստված դա այդպես է որոշել: Մենք միայն գիտենք, որ նա մեզ ընտրել է: Որտեղի՞ց գիտենք դա: Քանի որ նա մեզ հնարավորություն է նվիրել ջրով և Հոգով կնքվելու: Վերստին ծնվելը ջրից և Հոգուց նշան է ընտրության: Աստված որոշել է կանչել նրան, նրան և նրան՝,, Ես նրանց ընտրել եմ եկեղեցու ժամանակաշրջանի համար, նրանք լինելու են Քրիստոսի եկեղեցու մասնիկը: Եթե նրանք հետևեն առաքյալներին, նախապատրաստվելու են Քրիստոսի գալստյանը և ունենալու են հնարավորություն որպես առաջնեկներ գնալու Աստծո արքայություն,,: Դա մեզ համար վճռական է: Մենք չենք հասկանում, թե ինչու ենք մենք ընտրվել կամ ինչու է Աստված ինչ որ բան այդպես անում, ոչ թե՝ այլ կերպ: Սա Աստծո կամքն է: Դա մենք պարզապես ընդունելու ենք: Ինչ Տերն ուզում է, դա էլ անում է: Բայց նա դա չի անում կամայականորեն: Նա հավատարիմ է: Նա ասում է, թե ինչ է անում, և անում է այն, ինչ ասում է:

Նա մարդուն ստեղծել է ազատ կամքով: Նա չի ուզում, որ մարդը ինչ որ բան ստիպողաբար անի: Մարդը պետք է ազատ կողմնորոշվի դեպի

Աստված՝ սեփական որոշումով:,, Ես ուզում եմ արձագանքել Աստծո կանչին,,- դա է վճռականը: Աստված հավատարիմ է: Նա արարել է աշխարհը: Նա արարել է մարդուն ազատ կամքով և նա ուզում է միշտ հարգել մեր որոշումները: Նա մեզ ընտրել է և ցանկանում է, որ մենք արձագանքենք նրա կանչին ազատ կամքով: Նա չի ուզում մեզ ստիպողաբար իր փրկությունն առաջարկել: Նա չի ուզում մեզ երբեք սպառնալ: ,, Ուշադիր եղիր, եթե դու այս կամ այն բանը չես անում, ապա քեզ համար սարսափելի կլինի,,:- Ոչ: Դա այդպես չէ:

Ինչպե՞ս նա վարվեց Ադամի և Եվայի դեպքում: Նրանք հնարավորություն ունեին ապրելու Աստծո սերը, նրանք ապրում էին անգամ Աստծո հետ և ստանում էին ամեն ինչ, ինչի կարիքն ունեին: Աստված սիրով նրանց տվեց ամեն ինչ և ասաց նրանց, թե ինչ է նրանցից սպասում: Մնացած ամեն ինչը նրանց գործն էր: Աստված նրանց ոչ մի բան չստիպեց, նրանց վրա չներգործեց : Նա ասաց. ,, Դուք կարող եք տեսնել, որ ես ձեզ սիրում եմ: Ես ձեզ ապացուցել եմ իմ սերը, դուք կարող եք դա զգալ: Եվ

Ժամերգությունը Բրափթոնից հեռարձակվում էր կանադական 60 համայնք՝ այստեղ ժամերգությանը մասնակցում էր 3600 հավատացյալ:

Մարդուն դուր կգա, թե՝ ոչ, կա միայն մեկ ճանապարհ՝ Հիսուս Քրիստոսը

դա եմ ես սպասում ձեզնից: Հիմա կարող եք դուք ազատ ընտրություն կատարել,,:

Նույնն անում է նա մեր պարագայում: Նա մեզ տալիս է հնարավորություն՝ ապրելու իր սերը և նա մեզ ասում է, թե ինչ է սպասում մեզնից: Հիմա մենք ենք որոշելու՝ ասենք Աստծուն՝ այո կամ ասենք՝ ոչ:- Նա մեզ ոչ մի բանում չի ստիպում:

Մենք կանք և մնում ենք ազատ: Աստված մեզ չի սպառնում, նա ոչ մի ճնշում չի գործադրում: Մենք կարող ենք ազատ որոշել, թե մենք ինչ ենք ուզում: Աստված վստահեցնում է, որ մինչև վերջ մենք ազատ ենք լինելու մեր որոշումներում: Մենք երբեք ստիպողաբար չենք այո ասելու Աստծուն: Նա նաև միշտ դրա համար է հոգալու, իսկ դա կարևոր կետ է, որ մեզ երբեք չեն ստիպելու ոչ ասել նրան : Անկախ այն բանից, թե ինչպիսիք են իրավիճակները, նա միշտ վստահեցնելու է, որ մեզ համար հնարավոր է նրան այո ասելը, նրա կանչին պատասխանելը և նրան հետևելը: Դա շատ կարևոր է, քույրեր և եղբայրներ: Հիշեք սա: Պողոսն ասում էր, որ մեզ ոչինիչ չի կարող բաժանել Աստծո սիրուց / Հռոմեացիներին8,35/: Դա նշանակում է, որ Աստված վստահեցնում է, որ մենք, ինչ էլ տեղի ունենա, ազատություն և հնարավորություն ունենք ճիշտ որոշում կայացնելու և նրան այո ասելու: Այլ դեպքերում, երբ փորձությունները դժվար լինեն, երբ հալածանքները շատ լինեն, որ մենք չկարողանանք դրանք հաղթահարել և ստիպված լինենք Աստծուն թողնել և անհավատրիմ դառնալ, այդ դեպքում մենք ազատ չենք լինի: Աստված ուզում է, որ մենք ազատ լինենք, դրա համար էլ նա հոգում է, որ մենք բոլոր իրավիճակներում հնարավորություն ունենանք նրա այո ասելու և հետևելու: Դա նրա հավատարմության մի մասնիկն է: Նա հարգում է կանոնները և վստահեցնում է, որ ինքը հարգվում է: Դրա համար էլ նա մեզ ընտրել է: Նա մեզ հարցնում է՝ ,,Ուզու՞մ ես դու արձագանքել իմ կանչին,,: Ինչ էլ լինի կամ չլինի, դա միայն քեզնից է կախված: Դու կարող ես որոշում կայացնել:

Աստված արարում է մեր փրկությունը: Մենք չենք կարող ինքներս ստեղծել մեր փրկությունը : Մենք կանք և մնում ենք մեղավորներ: Մենք չենք կարող վստահեցնել, որ մենք կգնանք Աստծո արքայություն: Մենք կարիք ունենք փրկության, մենք կարիք ունենք մաքրման, մենք պետք է փառահեղ դառնանք, որպեսզի շատ հեշտ լինի ասել՝ դա կարող է միայն Աստված: Մենք չենք կարող ասել՝,, Ես հիմա առաքինի եմ: Ես այնքան բարի մարդ եմ, ես կարող եմ Աստծո արքայություն գնալ,,: Այդպես չի լինում: Աստված է ստեղծում մեր փրկությունը, սակայն մենք պետք է հարգենք նրա պայմանները : Նա փրկելու է նրանց, ովքեր հավատարիմ են մնում, նրանց է նա ընտրելու Աստծո արքայություն տանելու համար: Նա ուզում է, որ մենք մինչև վերջ հավատանք Հիսուս Քրիստոսին, և մենք պետք է հետևենք հավատի այդ ճանապարհին՝ անկախ այն բանից, թե ինչ կլինի: Դա միշտ չէ, որ հաճելի է ու հարմար: Ավելի հաճախ մենք կգնայինք այլ ճանապարհով: Մենք հաճույքով կուզենայինք, որ Աստված պացուցի իր սերը մեր հանդեպ: Մենք հաճույքով կուզենայինք, որ Աստված այս բանը ցույց տար կամ մյուս բանը բացատրեր: Սակայն, Աստված ասում է՝ ոչ, ես մի անգամ եմ որոշել, այն էլ՝ հավիտենականության համար: Դու պետք է պարզապես հավատաս: Այլ խոսքով ասած՝ Դու պետք է ինձ վստահես: Ես քեզ տալիս եմ իմ խոսքը, ես քեզ ասում եմ, թե դու ինչ պետք է անես: Վստահիր իմ խոսքին: Վստահիր իմ սիրուն:.

Սա է միակ ճանապարհը մաքրվելու, սրբացվելու և փառահեղ դառնալու: Սա է հավատի ճանապարհը, անգամ ,եթե այն, ինչ դու տեսնում ես, չի համապատասխանում խոսքին, անգամ, եթե այն, ինչ դու ապրում ես, բոլորովին այլ է, քան այն, ինչ քեզ ասվել է, դու պետք է Աստծուն վստահես: Վստահիր նրան: Վստահիր նրա խոսքին: Վստահիր նրա սիրուն: Եթե դու նրան վստահես, ապա նա քեզ կփրկի: Նա քեզ կմաքրի, նա քեզ կսրբացնի, նա քեզ փառահեղ կդարձնի: Դու կարող ես գնալ նրա

արքայություն:

Նա է արարում փրկությունը: Սակայն նրանց համար, ովքեր մինչև վերջ վստահում են նրան: Նա իրականացնում է իր պլանը: Մենք կանչված ենք Քրիստոսի հարսնացուների մասը դառնալու, առաքյալների միջոցով Քրիստոսի եկեղեցու համար նախապատրաստվելու, որպես առաջնեկներ Աստծո արքայություն գնալու: Աստված ուզում է դա իրականացնել: Ոչ ոք չի կարող դրանում նրան խանգարել: Նա վստահեցնում է, որ ամեն ինչ այնպես է գնում, ինչպես ինքն է ուզում: Նա անում է այն , ինչն ուզում է, և նա խոստացել է, որ չարը երբեք ի զորու չի լինի հաղթելու եկեղեցուն:

Հիսուսը խոստացել է մինչև վերջ լինել առաքյալների հետ: Հիշենք վիշապի դրվագը Հայտնությունից, որը փորձում էր կուլ տալլ կնոջը, սակայն, ոչ ոք չկարողացավ խանգարել տղայի ծնունդին և ոչ ոք չկարողացավ խանգարել, որ նա համբառնա Աստծո մոտ / Հայտնություն 12, 1-5/: Աստծո մասին այս բոլոր պատմությունները նշանակում են, որ Աստված վստահեցնում է, որ այն, ինչ ինքն է որոշել, դա տեղի է ունենում: Իսկ նրա համար դա արդեն տեղի է ունեցել: Ես կարծում եմ որ Հայտնության մեջ ,նաև անգլիական Աստվածաշնչի մեջ ամեն ինչ նկարագրվում է անցյալով: Ինչ այնտեղ ցույց է տրվում, ոչինչ է, քան այն, ինչը նոր է տեղի ունենում, ինչ որ բան է, որը արդեն տեղի է ունեցել, քանի որ Աստծո համար ժամանակ գոյություն չունի: Նա հայտարարություն չի անում: Նա կանխատեսումներ չի անում: Նա նկարագրում է իրականությունը, քանի որ նա վեր է ժամանակից: Նրա համրա ամեն ինչ պարզ է: Նա ամեն ինչ արել է: Ոչ ոք չի կարող դրան խանգարել: Ոչ մի մտահոգություն, չարը չի կարող եկեղեցուն ստիպել: Առաքյալներն ի վիճակի են լինելու իրենց առաջադրանքը մինչև վերջ իրականացանելու, և Քրիստոսի հարսացուն գնալու է Աստծո արքայություն: Աստված դա անելու է: Դա նաև նշանակում է, որ ժամանակը սահմանափակ է և նրա Որդին գալու է, երբ նա որոշում կայացնի: Մեկ անգամ ևս՝ մենք՝ փոքր մարդիկս, չենք կարող նրա վրա ազդել: Աստված կախում չունի մարդկանցից: Նա կարող է ուղարկել իր Որդուն, երբ ուզենա: Աստծո Որդին դեռ չի եկել, բայց ոչ այն բանի պատճառով, որ նա չի կարող գալ, այլ նրա համար, որ Աստված դեռ չի ուզում: Նա մեր կարիքը չունի՝ փրիության իր պլանը՝ ավարտին հասցնելու: Ես վերջերս ասացի՝ Հիսուսը կկարողանար գալ 50 տարի առաջ և բոլոր նրանց իր հետ տանել, ովքեր պատրաստ են: Դա կախված չէ թվերից կամ էլ մարդկանց ունակություններից: Քչերով նա մեծ բաներ կարող է անել: Նա կարող էր գալ դեռ 50 տարի առաջ: Որ նա դա չի արել, միայն նրա համար, որ Աստված չի ուզել, որ նա ավելի շուտ գա, քանի որ նա մեզ սիրում է և ուզում է մեզ շանս տալ նախապատրաստվելու: Նա անում է այն, ինչ ուզում է: Դա նաև նշանակում է, որ մենք դա պետք է լուրջ ընդունենք և գիտակցենք, որ ժամանակը սահմանափակ է: Երբեմն ես լսում եմ՝ ,, Այո, բայց եթե մենք չպետք է հիմա պատկանենք Քրիստոսի հարսնացուներին, ապա խաղաղության թագավորությունում դեռ հնարավորություն կունենանք փրկության հասնելու,,:

Տերն անում է այն, ինչ ուզում է: Նա ինձ հիմա, այս ժամանակ կանչել է: Ես չեմ կարող պայման դնել, որ դա վերաբերում է նաև խաղաղության թագավորության շրջանին: Աստված անում է այնպես, ինչպես իրեն է դուր գալիս: Ես չեմ կարող ասել՝,, Ես պատրաստ չէի, երկնային Հայր, ինձ երկրորդ շանս տուր,,: Գուցե՝ այո, գուցե՝ և ոչ: Ես հիմա ոչ մեկին չեմ ճնշում և ասում եմ՝ ,, Ուշադիր եղիր: Մենք պետք է հասկանանք, որ մենք որպես մարդ Աստծուն չենք կարող ասել, թե նա ինչ պետք է անի:

Հիմա նա մեզ կանչել է՝,, Խնդրեմ, արի, կայացրու քո որոշումը,,: Ես հնարավորություն չունեմ և չեմ էլ տեսնում, թե ինչպես կարող եմ ես նրա վրա ազդել՝ ինձ երկրորդ անգամ խաղաղության թագավորությունում շանս տալու համար: Ես չեմ կարող իմանալ, թե նա դա կանի, թե՝ չի անի: Նա ինձ չի հարցնելու, թե ես հաճույքով ինչ կուզենայի:

Դա նշանակում է, որ մենք պետք է արձագանքենք Աստծո կանչին: Հիմա մեզ համար ողորմածության ժամանակաշրջան է: Ես պետք է մի քանի խոսքով ամփոփեմ: Աստված ուզում է, որ մենք միասնության մեջ լինենք իր հետ: Նա որոշել է ընտրել մեզ: Նա մեզ հիմա է կանչում, այս ժամանակաշրջանում: Մենք կարող ենք դրան այո կամ ոչ ասել՝ անկախ

իրադարձությունների՝ ազդեցություններից: Ոչ ոք չի կարող ասել՝ ,, Այս առանձնահատուկ իրավիճակների պարագայում ես չեմ կարող հավատարիմ մնալ,,: Այդպես չի լինի: Աստված հավատարիմ է: Նա միշտ հոգ է տարել, ոչ քեզ համար հնարավոր լինի և քեզ մի ճանապարհ է տվել՝ իրեն այո ասելու: Ոչինչ չի կարող ինձ ստիպել նրանից հեռանալ: Դա միայն ինձնից է կախված: Իմ որոշումը կախված է իմ հավատից և նրան հետևելու ու նրա հետ միասնություն ունենալու իմ պատրաստակամությունից : Դա այն կարևոր կետն է, եղբայրներ և քույրեր, ըստ որի՝ իմ որոշումը կախված է ինձնից, միայն ինձնից: Իմ որոշումը կախված է իմ հավատից : Դրա համար է աշակերտների խնդրանքը՝ ,, Ուժեղացրու մեր հավատը,, / Ղուկաս 17,5/: Ինչպե՞ս կարող է մեր հավատը ուժեղանալ : Հիսուսն ինքն է որոշել: Պողոսն ասում է՝ հավատը գալիս է քարոզից / Հռոմեացիներին 10,17/: Պետք է քարոզը, Աստծո խոսքը լսել, որպեսզի հավատ ունենան և հավատն ուժեղացնեն:

Հիսուսը աղոթում է նրանց համար, ովքեր առաքյալների խոսքի միջոցով իր հանդեպ հավատ են ունենում / Հովհաննես 17,20/: Գլխավոր առաքյալ Վեհրը հաճախ էր ասում և ես ուզում եմ այն ընդգծել՝ ,, Որպեսզի փրկվենք յուրաքանչյուր իրավիճակում, մենք կարիք ունենք ամուր հավատի, իսկ ամուր հավատ ունենալու միակ ճանապարհը դա առաքյալների կողմից քարոզվող Ավետարանին լսելն է,,: Երբ ես ասում եմ ,, լսել,,; ապա խոսքը ոչ միայն ունկնդրելու մասին է, որ կարողանան ասել՝ ,, Այո նա ասաց այս և այն բանը,,:; այլ մենք պետք է խոսքը ,, ուտենք,, ; ,, մարսենք,,; մենք պետք է նրա հետ աշխատենք: Դա ասօրվա մեր խնդիրն է: Հասարակության մեջ մենք վարժվել ենք արագ սննդին, ես կարծում եմ ,որ Կանադայում էլ է այդպես, ինչպես Ֆրանսիայում և Եվրոպայում: Մենք ունենում ենք պատրաստի սնունդ, արագ պատրաստված ուտելիք: Ամեն ինչ արդեն պատրաստ: Աստծո խոսքի դեպքում այդպես չպետք է լինի: Եթե Աստծո խոսքից օգուտ են ուզում ստանալ, ապա պետք է դրա հետ աշխատել, դրանով զբաղվել, դրա մասին մտորել: Պետք է հարց առաջադրել՝Ի՞նչ է սա նշանակում ինձ համար: Ի՞նչ է ուզում Աստված ինձնից: Ի՞նչ պետք է ես անեմ: Ինչքան շատ մենք աշխատենք քարոզվող խոսքի հետ, ինչքան լավ այն ,, մարսենք,,; այնքան ավելի ամուր կլինի հավատը: Դա Նորառաքելական եկեղեցու առաքյալների հայտնագործությունը չէ, որպեսզի վստահեցնեն, որ եկեղեցին լիքը լինի: Դա Աստծո կամքն է: Նա անում է այն, ինչ ուզում է: Նա է որոշում կայացնում և վճռում, որ այն ճանապարհը, որը միակն է, տանում է դեպի ամուր հավատ: Էսիր Աստծո խոսքը; ,, կեր,, խոսքը; ,,ծամիր այն,, ;աշխատի նրա հետ: Դա է որոշիչը:

Դրանից բացի, մենք պետք է ուզենանք յուրաքանչյուր իրավիճակում, բոլոր հարաբերություններում Աստծոն այո ասել: Ոչ այն բանի համար, որ մեզ վտանգ է սպառնում,որ ուզում ենք մեր ճանապարհից հեռացնել հիվանդությունները կամ նմանատիպ այլ խնդիրներ: Մենք Աստծոն այո ենք ասում, քանի որ մենք ուզում ենք նրա մոտ լինել, որովհետև մենք նրան սիրում ենք: Մենք այստեղ ենք, որովհետև մենք ուզում ենք Տիրոջը հետևելու ուժեղ կամք ունենալ, որովհետև ուզում ենք ուժեղացնել մեր սերը Աստծո հանդեպ: Մեզ համար միակ ճանապարհը Հիսուս Քրիստոսին ճանաչելու մեջ զարգանալն է: Ես հաճախ եմ ասել և ես այդպես եմ կարծում՝ ինչքան շատ դու Հիսուսին ճանաչես, ինչքան շատ դու նրան սիրես, այնքան ուժեղ կդառնա նրան հետևելու և նրա մոտ լինելու քո կամքը: Եկեք կապված լինենք Հիսուսի հետ: Երբ մենք Աստվածաշնչ ենք կարդում, ապա տեսանելի է դառնում այն ամենը, ինչ նա արել է: Բայց դա այսօր մեզ մի նոր բան է ասում՝ Ի՞նչ կաներ Հիսուսն այսօր: Ի՞նչ նշանակություն ունի դա այսօր ինձ համար, իմ կարգավիճակում, ի՞նչ է արել ինձ համար, ի՞նչ է անում ինձ համար, ի՞նչ է նա ինձ համար անելու ապագայում: Ինչքան շատ մենք Հիսուսի հետ կապված լինենք, ինչքան շատ մենք նրան ճանաչենք, այնքան շատ կսիրենք նրան, այնքան շատ մեծ կլինի նրան հետևելու մեր կամքը: Դա մեզ տալիս է ուժ՝ բոլոր հարաբերություններում, բոլոր իրավիճակներում Աստծո այո ասելու:

Աստված անում է այն, ինչ ուզում է: Մենք պետք է ընդունենք նրա կամքը: Բայց մենք չմոռանանք՝ նա ուզում է, որ մենք փրկվենք: Նա ընտրել է քեզ: Նա ասում է քեզ, թե ինչ պետք է անես: Դու պետք է ինքդ որոշես: Եթե մենք բավարար հավատ և բավարար սեր ենք ունենում, մեզ համար հնարավոր է լինում մինչև վերջ Աստծուն այո ասելը, իսկ հետո նա մեզ փառահեղ է դարձնելու:

Գլխավոր մտքեր

Աստված ուզում է մեր փրկությունը: Նա մեզ ընտրել է և կանչել որպես առաջնեկներ՝ իր արքայությունը գնալու: Նա հոգում է, որ մենք կարողանանք հետևել իր կանչին: Մեր փրկությունը կախված է մեր հավատից և Աստծո մոտ գտնվելու մեր կամքից:

Տարածաշրջանային բաժին



Լուսանկարը՝ Հայաստան անի ՆԱԵ

Առաքյալի երկրորդ այցը 2019-ի սեպտեմբեր ամսին էր: Այստեղ նա Երևանում է, Երևանի տեսարժան վայրերից մեկի առաջ / կոչվում է Կասկադ/:

Ստեփանավանի համայնքի կիրակնօրյա դպրոցի աշակերտուհին առաքյալին նվիրեց իր կողմից նկարված մի նկար, որը, ի դեպ, վերաբերում էր տվյալ ժամերգության աստվածաշնչյան խոսքին, երբ Հիսուսն իր մոտ է կանչել տալիս երեխաներին: Առաքյալը նախապես չգիտեր, որ հենց այդ բովանդակությամբ նկար է նվեր ստանալու:

Այն բանից հետո, երբ առաքյալ Վիլիելմ Հոյերը առաքելական երկարամյա ծառայությունից հետո ուղարկվեց հանգստի, Հայաստանի Նորառաքելական եկեղեցին ունեցավ նոր առաքյալ՝ հանձինս առաքյալ Յենս Լինդեմաննի, ով միաժամանակ առաքյալի ծառայություն է իրականացնում շատ այլ երկրներում: Առաքյալ Լինդեմանն արդեն երկրորդ անգամ է լինում Հայաստանում: Առաջին անգամ նա եկել էր շրջանային առաքյալ Ռայներ Շթորքի և առաքյալներ Վիլիելմ Հոյերի ու Պավել Գամովի ուղեկցությամբ: Շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը Հայաստանի հավատացյալ քույր-եղբայրներին ծանոթացրեց առաքյալ Լինդեմանի հետ: Այդ ժամանակ առաքյալ Լինդեմանը ժամերգություններ անց չկացրեց :

Ճանապարհորդության առաջին օրը առաքյալ Լինդեմանը սեմինար անցկացրեց սպասավոր եղբայրների և կիրակնօրյա դպրոցի ուսուցչական անձնակազմի հետ: Թեման եկեղեցական ճիշտ աշխատանքն էր: Նա շեշտեց, որ եկեղեցու զարգացումը ամենից շատ կախված է սպասավոր եղբայրներից և բոլոր այն մարդկանցից, ովքեր գործում են եկեղեցում, ուստի պետք է բոլոր առաջադրանքները սիրով կատարել: Ապա նա ժամերգություններ անցկացրեց Հայաստանի բոլոր համայնքներում: Հավատացյալ բոլոր քույրերն ու եղբայրները նրան ընդունեցին սրտանց և նաև՝ ծաղկեփնջերով: Առաքյալի քարոզները դուր եկան նրանց, քանի որ նա խոսում էր պարզ, հասկանալի էր բացատրում աստվածաշնչյան խոսքի իմաստը: Յուրաքանչյուր ժամերգության ավարտին քույր-եղբայրները շատ շնորհակալություն էին հայտնում առաքյալին:

Թեև Հայաստանի համայնքները միմյանցից շատ հեռու են, առաքյալը չէր հոգնում և բոլոր համայնքերում էլ քարոզում էր եռանդուն ու համոզեցուցիչ: Առաքյալ Լինդեմանը հատկապես

գոհ էր, որ քույր-եղբայրները հավատով և տոնականորեն են ճաշակում Սուրբ Հաղորդությունը:

Այս նկարում առաքյալ Լինդեմանը Գյումրիի համայնքում է: Այնտեղ, ժամերգության ավարտից հետո, երգչախմբի երեխաները ելույթ ունեցան: Երգերից մեկը նվիրված էր հույսին: Երգչախմբի ելույթը շատ դուր եկավ առաքյալին, նա ևս հաստատեց, որ երբեք չպետք է հույսը կորցնել, ի դեպ, նա հատուկ աղոթեց 1988-ի ավերիչ երկրաշարժի զոհերի հոգիների համար: Նա հույս տվեց քույր-եղբայրներին և պարզաբանեց, որ Աստծո հետ ամեն ինչ հնարավոր է, միայն պետք է հավատն ուժեղացնել և Ավետարանի ուսմունքի համաձայն ապրել:

Այցի ժամանակ առաքյալը եղավ նաև Սևանի ափին գտնվող երիտասարդների հանգստյան գոտում: Նա հավանեց երիտասարդների համար գործող այդ ծրագիրը և կարծիք հայտնեց, որ այն պետք է շարունակական լինի: Դժվար սոցիալական պայմանների պատճառով տարբեր համայնքների շատ երեխաներ ու երիտասարդներ հնարավորություն չունեն ամռան ամիսներին որևէ տեղ մեկնելու, բացի այդ, այս ծրագիրը հնարավորություն է տալիս միմյանց լավ ճանաչելու և միասնություն կազմելու:

Առաքյալ Յենս Լինդեմանը գոհ էր, որ քույր-եղբայրները թարգմանչի շնորհիվ լավ էին հասկանում իր քարոզները, իսկ սպասավոր եղբայրները պատրաստ են հավուր պատշաճի կատարել իրենց առաջադրանքները:

Առաքյալն ուրախանում էր, որ բոլոր համայնքներում շատ են երիտասարդները, բայց տղամարդկանց փոքր քանակը տխրեցնում էր նրան:

Առաքյալն աղոթում էր, որ Աստծո օգնությամբ ընտանիքի մյուս անդամներն ու տղամարդիկ ևս գտնեն եկեղեցու ճանապարհը և այցելեն ժամերգությունների:

ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 20, 1-13-Ի

Հիսուսը մեկ անգամ ևս աշակերտներին պատմում է Աստծո արքայության մասին: Նա այն համեմատում է խաղողի այգու տիրոջ հետ, ով աշխատողներ է վարձում: Նրանք տարբեր տևողության աշխատանք են կատարում նրա համար, սակայն իրենց կատարած աշխատանքի դիմաց նրանք բոլորն էլ նույն աշխատավարձն են ստանում:

Տանուտերը վաղ առավոտյան գնում է մշակներ վարձելու: Եվ մշակների օրավարձը մեկ դահեկան սակարկելով՝ նրանց ուղարկում է իր այգին:
Երեք ժամ անց տանուտերը տեսնում է, որ շուկայում տղամարդիկ են կանգնած, ովքեր դեռ աշխատանք չեն գտել:
Նա նրանց ասում է. ,, Դուք էլ գնացեք իմ խաղողի այգին, և ինչ որ արժանի է, կտամ ձեզ,,:
Նրանք էլ են գնում խաղողի այգի:
Վեց ժամ անց այն բանից հետո, երբ իր այգին էր ուղարկել առաջին աշխատողներին, տանուտերը նորից է գնում շուկա և նորից է աշխատողներ վարձում: Դրանից երեք ժամ անց նա նորից է աշխատողներ ուղարկում: Երբ առաջին աշխատողներն արդեն տասնմեկ ժամ աշխատել էին, տանուտերը նորից է հայտնաբերում տղամարդկանց, ովքեր առանց աշխատանքի էին:
Նա ասում է նրանց.,,Ինչու՞ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել,,:
Նրանք նրան պատասխանում են.,, Որովհետև մեզ ոչ ոք չվարձեց,,: Տանուտերը նրանց էլ ուղարկում իր խաղողի այգին:
Եվ երբ երեկո եղավ, այգու տերը իր գործավարին ասաց.,, Կանչիր մշակներին և տուր նրանց վարձը՝ սկսած վերջիններից մինչև առաջինները,,: Եկան այն աշխատողները, ովքեր տասնմեկերորդ ժամին էին եկել աշխատելու, յուրաքանչյուրը ստացավ իր մեկ դահեկանը:
Վերջում պետք է վարձատրվեին այն աշխատողները, ովքեր առաջինը սկսեցին աշխատանքը: Նրանք կարծում էին, թե ավելի կստանան, քան նրանք, ովքեր կարճ ժամանակ էին աշխատել: Սակայն նրանք էլ ստացան նույն մեկ դահեկանը:
Նրանք տրտնջում են տանտիրոջ

դեմ և ասում.,, Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործ արեցին, իսկ դու հավասար արեցիր մեզ, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը,,։ Տանուտերը պատասխանում է նրանցից մեկին և ասում.,, Ընկեր, քեզ չեմ զրկում, չէ՞ որ ինձ հետ մեկ դահեկանի սակարկեցիր, ստացիր քոնը և գնա, այս վերջիններին կամենում եմ տալ որքան և քեզ, միթե իրավունք չունե՞մ իմ ունեցածի հետ վարվելու, ինչպես կամենում եմ,,։



ԱՅՑ ՎԱԼԵՆՏԻՆԻՆ՝ ՓԱՐԻԶՈՒՄ / ՖՐԱՆՍԻԱ/

Փարիզը Ֆրանսիայի մայրաքաղաքն է, այստեղ ապրում է ավելի քան երկու միլիոն մարդ՝ նաև ես: Իմ անունը Վալենտին է և ես հինգ տարեկան եմ: Ամեն կիրակի ես մայրիկիս հետ գնում եմ ժամերգության: Ես հաճախում եմ կիրակնօրյա նախակրթարան, իմ ուսուցչուհիների անուններն են՝ Պատրիսիա և Շթեֆանի: Այստեղ մենք միասին էքսկուրսիա ենք գնացել:

Անցած տարվա Սուրբ Ծննդյան տոների համար մենք՝ երեխաներս, Հիսուսի ծննդյանը նվիրված ներկայացում էինք դեմադրել: Ես հագել էի հովվի հագուստ և ունեի ձեռնափայտ: Մենք անգամ ոչխարներ էինք պատրաստել: Մենք արժանացանք բուռն ծափահարությունների: Դա արտակարգ էր:

Անցած տարի գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը անակնկալ այցելեց մեր համայնք: Մենք շատ ուրախացանք: Ժամերգության ավարտին ես լուսանկարվեցի գլխավոր առաքյալի հետ:

Այս ամառ ես իմ հայր Անդրեի և իմ մայր Սոնյայի հետ Նյու Յորքում էի: Մենք տեսանք ազատության արձանը:

Այդ ճանապարհորդության ընթացքում ես կարողացա անգամ Նյու Յորքի հրշեջների հետ լուսանկարվել:

Ես հաճախում եմ մանկապարտեզ, այս տարի ես ավագների խմբում եմ: Հաջորդ տարի ես գնալու եմ կրտսեր դպրոց, այնտեղ ես կարդալ եմ սովորելու: Ես արդեն կարողանում եմ գրել իմ անունը և հաշվել մինչև հիսունը: Կարող ե՞ք լուսանկարում մանկապարտեզի իմ ընկերների մեջ գտնել ինձ: Մի հուշում՝ ես նստած եմ առաջին շարքում: Իմ լավագույն ընկերների անուններն են՝ Քլոթաիրե, Էվան և Մաքսիմե:

Ամենաշատը ես սիրում եմ խաղալ շարժական խաղեր: Իմ ծնողների հետ ես այցելել եմ շարժական խաղերով զվարճանքի պուրակ, այնտեղ կարող են խաղալ այն բոլոր շարժական խաղերով, որոնք այնտեղ կան: Դա ինձ շատ է դուր գալիս: Սակայն, ես հաճույքով նաև սպորտով եմ զբաղվում:



Ես սիրում եմ կենդանիներ: Երբ մենք արձակուրդի ժամանակ մի կենդանաբանական այգում էինք, ես փորձեցի մոտենալ մի փոքրիկ կենգուրույի: Երբ մենք այցելում ենք գյուղում ապրող իմ տատիկին ու պապիկին, հաճախ ենք տեսնում եղնիկներ և մուֆլոններ:

Իմ զարմիկի անունը Թոբիաս է, իսկ զարմուհուս անունը՝ Դիանե: Թոբիասի հետ ես հաճախ նետ ու աղեղով խաղում եմ հնդկացի կամ մամութ որսորդ: Դուք տեսնում եք մեզ մեր վրանի առաջ:

Ես ամենաշատը սիրում եմ ուտել սպագետտի բոլոնեզե, եփած ձու և, իհարկե, ֆրի: Ես սիրում եմ նաև մրգեր, ամենից շատ սիրում եմ ելակ և սեխ: Երբեմն անգամ ես ինքս եմ եփում: Այստեղ դուք տեսնում քե ինձ, թե ինչպես եմ ես ռիզոտտո պատրաստում:

Աղբյուրը՝ Ավագի՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 10/2019, լուսանկարները՝ մասնավոր՝ SimpLine - stock.adobe.com

Լուսանկարը՝ Օլիվեր Ոյութենի

Տես, ես գալու եմ շուտով

Քրիստոսի գալուստը վեր է մարդկային հաշվարկներից: Այն ամենը, ինչ մենք գիտենք, այն է, ինչը դրա վերաբերյալ ասել է Հիսուսը: Իր ուսուցողական տեքստում գլխավոր առաքյալ Ժան – Լյուք Շնայդերը պատասխանում է շատ հարցերի, բացի մեկից:

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը անցյալում կատարված Աստծո գործունեության մասին:

Աստված հայտնվում է բնության և պատմության միջոցով: Աստծո հայտնությունը պատմության մեջ ինչպես հարկն է նկարագրված է դավանաբանության մեջ՝,, Որ Աստված հայտնվում է պատմության մեջ, նախ և առաջ պարզ է դառնում Իսրայելի ժողովրդի դարձով, ինչպես վկայում է Հին կտակարանը,, / Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն / ՆԱԵԴ 1,1,2/:

,, Իսրայելի ժողովրդի համար փրկության հիմնական իրադարձությունը եգիպտական գերությունից ազատումն է,, / ՆԱԵԴ 1,1,2/: Իսրայելի պատմության ընթացքում, օրինակ, պարտված պատերազմները մեկնաբանվում են որպես աստվածային պատիժներ: Բաբելոնյան գերությունը ևս ընկալվում է որպես Աստծո պատժի դատաստան, իսկ վերադարձը Երուսաղեմ՝ որպես Աստծո ողորմածության ապացույց: Այս պատմության մասին օրինակներից մեկը գտնվում է 2-րդ Մնացորդացի 36, 19-23-ում:

Նոր կտակարանի հիմնական ավետիսը, որը տեղ է գտել պատմության մեջ, Աստծո մարդացումն է Հիսուս Քրիստոսով՝,, Աստծո մարդացումը Հիսուս Քրիստոսով Աստծո պատմական ինքնահայտնությունն է, որը վեր է բոլոր անցած դեպքերից,,/ Հովհաննես 1,14; 1-ին Տիմոթեոս 3,16/:

Ի՞նչ կապ կա մարդկության և փրկության պատմությունների միջև:

Աստծո Որդու ծնունդը պատմական շրջանակներով մանրամասն նկարագրված է Ղուկասի 2, 1,2-ում:/ ՆԱԵԴ 1,1,3/: Նոր կատակարանային ձևակերպումը՝,, Երբ ժամանակը լրացավ,,; ցույց է տալիս աշխարհիկ պատմության ու փրկության պատմության միջև եղած կապը:

Ղուկասի Ավետարանում Հիսուսի ծնունդը նկարագրված է պատմության կոնկրետ իրադարձության ֆոնի վրա, մինչդեռ գաղատացիների թղթի 4,4-ում միայն ասվում է՝,, Իսկ երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց իր Որդուն, որը ծնվեց կնոջից և մտավ օրենքի տակ,,: Այստեղ ակնառու է այն, որ Պողոսը խուսափում է կոնկրետ պատմական վկայությունից: Չի խոսվում պատմական արտաքին պայմանների մասին, որոնք անհրաժեշտ էին, որ Աստծո Որդին մարդանար, այլ խոսվում է այն մասին, որ մարդացման ժամանակը ըստ էության փրկության պատմության հետ է կապված: Ինչու է դա այդպես, հիմնավորվում է միայն Աստծո կամքով:

Հիսուսի հայտնվելն ու նրա տեղեկությունը ըստ Մարկոսի 1,15-ի՝ ունի նշանային բնութագրություն՝,, Ժամանակը հասել է և մոտեցել է Աստծո արքայությունը, ապաշխարեցեք և հավատացեք Ավետարանին,,: Այստեղ առկա է հավատն այն բանի հանդեպ, որ Հիսուսը վավերական և հեղինակավոր ձևով տեղեկացնում է Աստծո կամքը, նախապայման այն բանի համար, որ իր անձը կարողանա ընկալվել որպես փրկության պատմության և նրա ընթացքի հիմնական իրադարձություն:

Ինչպե՞ս կարող է մարդը հասկանալ Աստոծ կամքը Ով հավատում է Հիսուսին, նա նաև հասկանում է, որ նրանով ներկա է լինում Աստծո արքայությունը: Արտաքին այլ նշանները դրանք Հիսուսի գործերն են՝ նրա տեղեկությունները, նրա հրաշքները, որոնց աստվածային ծագումը նույնպես կարող է միայն նրան հավատալու միջոցով որոշվել:

Ամփոփենք՝ Հին և Նոր կտակարանների համար առկա է մի հասկանալի միտք՝ Աստված գործում է պատմության մեջ: Բոլոր դեպքերում, ճանաչողության այն բանալին, ըստ որի Աստված գործում է պատմականորեն, ոչ թե պատմությունն ինքն է, այլ՝ հավատը:

Հաջորդիվ պետք է հարց առաջանա, թե կարող են պատմական կոնկրետ իրադարձությունները որպես օբյեկտիվ նշաններ և փրկության պատմության տեսանկյունից վկայություններ դիտարկվել: Խելամիտ է՞ ժամանակի պատմության մեջ վկայություններով փնտրել Քրիստոսի գալստյան մոտ լինելը :

Կա՞ն նշաններ Քրիստոսի գալստյան մոտ լինելու վերաբերյալ

Սինոպտիկական Ավետարաններում- այսինքն՝ ըստ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի- կան այսպես կոչված Հիսուսի վերջին ժամանակի մասին խոսքեր: Նրանցում նշված են իրադարձություններ, որոնք վկայում են Մարդու Որդու երևալը:.

Մարկոսի 13,4-10-ում աշակերտները հարցնում են Հիսուսին վերջին ժամանակի մասին և ստանում են հետևյալ պատասխանը. ,,Ասա մեզ, ե՞րբ պիտի լինի այդ, և ի՞նչ կլինի նշանը, երբ կատարվելու լինի այդ բոլորը: Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. ,, Զգույշ կացեք, ոչ ոք ձեզ չխաբի, որովհետև շատեր պիտի գան իմ անունով և պիտի ասեն՝ ես եմ Քրիստոսը, և շատերին պիտի մոլորեցնեն: Սակայն, երբ լսեք պատերազմների ձայներ կամ պատերազմների լուրեր, չխռովվեք, որովհետև այդ պետք է որ լինի, բայց դեռ աշխարհի բախճանը չէ: Ազգ ազգի դեմ պիտի ելնի և թագավորություն թագավորության դեմ, և տեղ-տեղ երկրաշարժեր պիտի լինեն, սով և համաճարակ և խռովություններ, բայց այդ բոլորը սկիզբն է երկանց: Եվ դեռ ձեզ էլ

պիտի մատնեն ատյանների, և ժողովարանների մեջ պիտի տանջվեք, և ինձ համար կուսակալների ու թագավորների առաջ պիտի կանգնեք՝ ի վկայություն նրանց: Բայց նախ պետք է, որ Ավետարանը քարոզվի բոլոր հեթանոսների մեջ,,: Հիսուսը միաժամանակ զգուշացնում է կեղծ քրիստոսներից, որոնք հայտվելու են՝ ,,Այն ժամանակ եթե մեկը ձեզ ասի, թե ,, Ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ, չհավատաք, որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի ելնեն և նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ մոլորեցնելու նպատակով, եթե հնարավոր լինի՝ նույնիսկ ընտրյալներին,, / Մարկոս 13, 21,22/:

Եվ ի վերջո թեմա է դառնալու Մարդու Որդու ժամանումը- այսինքն՝ Հիսուս Քրիստոսի գալուստը՝ ,, Բայց այդ օրերին, այդ նեղությունից հետո, արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա: Եվ աստղերը երկնքից վայր պիտի թափվեն, և երկնքում զորությունները պիտի շարժվեն: Եվ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զորությամբ ու բազում փառքով: Եվ այն ժամանակ պիտի ուղարկի իր հրեշտակներին ու պիտի հավաքի իր ընտրյալներին չորս կողմերից, երկրի ծագերից մինչև երկնքի ծագերը,, /Մարկոս 13, 24-27/:

Ինչու՞ չեն կարող պատմական իրադարձությունները Հիսուսի գալստյան ժամանակը հստակեցնել

Եթե կարդում են այս տողերը, նախ ունենում են այն տպավորությունը, թե հնարավոր է պատմական կոնկրետ իրադարձությունների միանշանակ կարգավորում: Եթե ավելի հստակ են տեսնում այդ տողերում գրվածը, ապա հասկանում են, որ դրանք միանշանակ չեն: Որպես վերջին ինդիկատորներ՝ նշվում են պատերազմներ, մոլորություններ, քրիստոսնյաների հետապնդումներ, բայց և դրական իրադարձություններ, ինչպիսիք են Ավետարանի համատարած քարոզումը: Սրանով, իսկ դրանք պատմության մյուս կողմի իրադարձություններն են, նշվում են տիեզերական իրադարձությունների վկայությունները՝ արևի և լուսնի խավարումները, աստղերի թափվելը երկնքից և ,, երկնքի զորությունների շարժումը,,: ,, Երկնքի զորությունների շարժման,, մասին խոսք կա նաև Պետրոսի Բ թղթի 3,10-ում՝,, Երբ երկինքը պիտի անցնի չքանա շառաչյունով, և տարերքը, հրով կիզված, պիտի լուծվի,,:

Եթե տեքստն ավելի մոտիկից են ուսումնասիրում, ամրագրում են, որ անհնար է նրանում գրվածները կապել պատմական կոնկրետ իրադարձությունների հետ: Պատմական իրադարձությունները նորից դիտարկվում են սարսափելի և միատեսակ, որպեսզի դրանք որպես Քրիստոսի գալստյան վկայություններ ընկալվեն: Մտածում են միայն կաթոլիկ առաքելական եկեղեցու միջոցով ֆրանսիական հեղափոխության արժևորման մասին՝ որպես վերջին ժամանակի իրադարձություն : Հաճախ տեսնում են միայն Եվրոպան և մոռանում են պատմական աղետները, որոնք տեղի են ունենում այլ մայրցամաքներում: Մենք էլ չենք կարող ասել, որ այն, ինչը մենք ապրում ենք, ավելի վատն ու անտանելի է, քան այն, ինչ ապրել են մեր նախնիներն ու այլ մայրցամաքների ժողովուրդները: Ավելի շատ պետք է հասկանալ, որ պատմական իրադարձությունների ամբողջությունը վկայություններն այն բանի, որ Քրիստոսի գալուստը անհրաժեշտ է:

Նշանները չե՞ն կարող թուլացնել հավատը

Առաքելական ավանդության մեջ առաքյալների ծառայության անձնական վերականգնումը ընկալվում է որպես Քրիստոսի գալստյան էական վկայություն: Փրկության պլանի մեկնաբանությունների մեջ ՆԱԵԴ 4,4- ում ասվում է, որ ,, Առաքյալների պաշտոնի վերականգնման նպատակը հարսնացուական համայնքի նախապատրաստությունն է Քրիստոսի գալստյան առիթով,,: Այս միտքը շեշտվում է նաև այլ տեղերում, ինչպես ՆԱԵԴ 6,4,2,3-ում՝,, Արդեն կանչված առաքյալների / 19-րդ դարում/ գործունեությունը չպետք է հիմնի այլ քրիստոնեական հավատքի միություն, այլ նպատակ ունի ողջ քրիստոնյաներին նախապատրաստելու Տիրոջ գալստյանը,,: Այսինքն՝ առաքյալների ծառայությունը նշան է այն բանի, որ փրկության պատմությունը թևակոխում է մեկ այլ փուլ, որը կապված է Քրիստոսի գալստյան հետ: Բոլոր դեպքերում, նոր ժամանակների առաքյալների ծառայությունը միայն Քրիստոսի գալստյան վերաբերյալ նշանի կամ վկայության համար է, որը կարծես նորից ի հայտ է եկել աստվածային գործի հիման վրա:

Երբ փորձ է արվում առանձնահատուկ պատմական իրադարձությունները որպես Քրիստոսի գալստյան մոտ լինելու նշան ընկալել, ապա կարելի է կարծել, որ Քրիստոսի գալստյան վերաբերյալ հավատը կարիք ունի ամրացման և հաստատման: ,, Նշանների,, պահանջը, որոնք, օրինակ, պետք է վկայեն նրա լիազորությունը, Հիսուսը միանշանակ մերժում է՝ ,, Նա պատասխան տվեց նրանց ու ասաց.,, Չար և շնացող ազգը նշան է փնտրում, այլ նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը,, / Մատթեոս 12,39/: ,, Հովնան մարգարեի նշանը,, մահվան թագավորությունում Հիսուսի գտնվելն է և նրա հարությունը: Սակայն, այս նշանը կարող են ընդունել միայն հավատով: Պատմական նշանների միջոցով ապացուցումը հակառակ է Նոր

Լուսանկարը՝ © vectorfusionart - stock.adobe.com

կտակարանի վկայությանը: Հավատը չի կարող նշանի միջոցով վերացնել: Դրա մասին է վկայում նաև Պողոսը Կորնթացիներին Ա –ի 1,22,23-ում, երբ նա քննադատորեն նկատում է. ,, Իսկ որովհետև հրեացիները նշան են հայցում, և հեթանոսները իմաստություն են փնտրում, մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների,,:

Մենք հավատում ենք, որ Աստված գործում է պատմության մեջ: Նա գործել է Իսրայելի ժողովրդի մեջ, նա Հիսուս Քրիստոսի միջոցով գործել է մարդկության մեջ, նա գործել է եկեղեցու ժամանակ: Իհարկե, մենք կարող ենք եկեղեցու պատմության իրադարձությունները ընկալել որպես Սուրբ Հոգու գործեր, ինչպես էկումենիկ ժողովները կամ առաքյալների պաշտոնի վերականգնումը, որոնք ուժեղացնում են Քրիստոսի գալստյան խոստումը: Գալուստն էլ է ունենալու պատմական իրադարձության բնութագիր: Այսօր մեզ համար էականն այն է, որ մենք վստահում ենք Հիսուս Քրիստոսի խոստմանը, որ նա նորից է գալու:

Կարո՞ղ են մարդիկ ավելին անել, քան հավատալ ու պատրաստ լինել

Վերջին ժամանակի ընբռնումը Մատթեոսի մոտ խոսում է գործի մասին և մեզ տալիս է կարևոր ազդակ: Այնտեղ այսպես է գրված.,, Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ չեք սպասում, մարդու Որդին կգա,,/Մատթեոս 24,447/: Այստեղ ավելի լավ է երևում, որ Քրիստոսի գալստյան հանդեպ հավատը չի կարող թուլանալ պատմական հատուկ իրադարձություններով: Հավատը հավատ չէ, երբ այն հիմնված է ժամանակի իրադարձությունների վրա, որոնք տեղեկացվում են լրատավամիջոցներով: Հիսուս Քրիստոսը գալու է, երբ նա դա որոշի: Չեն լինելու պատմական օբյեկտիվածված նշաններ դրա համար: Մենք չենք կարող այդ իրադարձության մոտ կամ հեռու լինելը աշխարհի սարսափելի իրադարձությունների հետ պայմանավորել և ասել.,, Հիմա պետք է տերը գա,,: Միակ նշանն այս է՝,, Ես տեղեկացնում եմ ձեզ: Ես ասում եմ ձեզ: Ես գալում եմ շուտով,,: Եվ այս խոստումը առաքյալների ծառայության միջոցով միշտ տեղեկացվում և ուժեղացվում է: Այստեղ պահանջվում է հավատ, հավատ աստվածաշնչյան վկայության և առաքյալների ծառայության հանդեպ: Այդ հավատը, որը միակ հիմքն է Հիսուս Քրիստոսի խոստման, որը մենք պետք է ամուր պահենք և այն խոստովանենք ուրիշների առաջ: Հավատի թուլացման յուրաքանչյուր փորձ գալիս է իր խոստմանը Աստծո հավատարմության հանդեպ թերահավատությունից:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ սպ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Տեղեկացում

05.01.2020	Նոյշաթել (Շվեյցարիա)
11.01.2020	Նզազի (Անգոլա)
12.01.2020	Դունդո (Անգոլա)
07.02.2020	Նիամեյ (Նիգեր)
09.02.2020	Պո (Բուրկինա Ֆասո)
16.02.2020	Հագեն (Գերմանիա)
21.02.2020	Լահորե (Պակիստան)
23.02.2020	Կարաչի (Պակիստան)
01.03.2020	Բեռլին (Գերմանիա)
22.03.2020	Կիսսիդուգու (Գվինեա)

New Apostolic Church
International